ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

«Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Ոստիկանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունումը պայմանավորված է ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը, կատարելագործումը և ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիրը, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիր.

Նախագծերի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշման գործողությունների ծրագրի 2.17-րդ, 2.18-րդ և 2.20-րդ կետերի կարգավորմամբ, որոնցով սահմանվել են ազդարարման համակարգը զարգացնելու անհրաժեշտությունը:

3. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Ներկայումս ազդարարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ազդարարման համակարգի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) և դրանից բխող

ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով: Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքը կարգավորում է ազդարարման, ազդարարման կարգի, ազդարարի իրավունքների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների՝ ազդարարման հետ կապված պարտականությունների, ինչպես նաև ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Հիշյալի լույսի ներքո պետք է նշել, որ ազդարարման ինստիտուտի իրավական կարգավորումներում առկա են բացթողումներ, որոնք խոչընդոտում են Օրենքի արդյունավետ կիրառումը: Այս բացթողումների վերացումը և դրանց համապատասխանեցումը Օրենքի հիմնական նպատակներին հանդիսանում է առաջնահերթ խնդիր:

Գործող օրենսդրության խնդիրներն ընդգծվել են նաև միջազգային պարտավորությունների կատարման շրջանակներում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր[1]

Մասնավորապես, 2025թ. հուլիսի 7-ից 9-ը Փարիզում տեղի ունեցած ՏՀԶԿ հակակոռուպցիոն ցանցի լիագումար նիստում ընդունվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏԶՀԿ) հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան գործողությունների ծրագրի Հայաստանի 5-րդ փուլի գնահատման շրջանակներում առաջընթացի զեկույցը: Զեկույցը վեր է հանել հետևյալ հիմնական խնդիրները.

1) Գործող օրենսդրությունը ազդարարից պահանջում է ոչ միայն բարեխղճորեն հավատալ հաղորդվող տեղեկությանը, այլև նախապես ստուգել դրա ճշգրտությունը: Սա ավելորդ բեռ է և չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

2) Օրենքում դրդապատճառների վերաբերյալ դրույթները կարող են սահմանափակել ազդարարների պաշտպանությունը, եթե հաղորդումն արվել է անձնական դրդապատճառներով: Մինչդեռ եվրոպական փորձը ցույց է տալիս, որ պաշտպանությունը պետք է տրամադրվի անկախ դրդապատճառներից:

3) Գործատուի ապացուցման պարտականությունը ներկայումս ձևակերպված չէ ամբողջությամբ. անհրաժեշտ է, որ գործատուն դատարանում ապացուցի ոչ միայն իր

[1] https://www.oecd.org/en/publications/armenia-fifth-round-of-anti-corruption-monitoring-follow-up-report_3d273009-en.html

գործողությունների օրինականությունը, այլև այն, որ դրանք որևէ կերպ չեն պայմանավորված ազդարարման փաստով:

4) Օրենքում բացակայում է վնասների փոխհատուցման և աշխատանքի վերականգնման հստակ ընթացակարգ, ինչը նվազեցնում է համակարգի արդյունավետությունը:

5) Ներքին հաղորդման ուղիները բոլոր պետական կառույցներում և պետական սեփականության կազմակերպություններում պետք է դառնան պարտադիր և հասանելի՝ ապահովելով գաղտնիության և անաչառության երաշխիքներ:

6) Անկախ մարմնի բացակայությունը ազդարարման համակարգի համակարգման և վերահսկման գործում սահմանափակում է պրակտիկ արդյունավետությունը: Այս առումով միջազգային լավագույն փորձը՝ Իռլանդիայի, Ֆրանսիայի, Լիտվայի օրինակները, ցույց են տալիս, որ անհրաժեշտ է ունենալ հատուկ լիազորություններով մարմին կամ բաժին, որը կզբաղվի բացառապես ազդարարների պաշտպանության հարցերով:

ՏՀԶԿ-ի կողմից արձանագրվել է իրավասու մարմին տերմինի կիրառման անորոշ լինելու խնդիրը, քրեական վարույթում չներգրավված ազդարարների պաշտպանության ընթացակարգի խրթին լինելը:

Գործող օրենքով չկա հստակ պարտավորություն՝ պետական մարմինների և պետական մասնակցությամբ կազմակերպությունների կողմից ներքին ազդարարման ուղիների և ընթացակարգերի ստեղծման վերաբերյալ: Նախագծով այս բացը վերացվում է. սահմանվում է պարտադիր պահանջ՝ յուրաքանչյուր իրավասու մարմնի կողմից ներքին ազդարարման ալիքների և ընթացակարգերի ձևավորման, համապատասխան պատասխանատու անձի նշանակման և տեղեկատվության հրապարակման վերաբերյալ՝ ապահովելով հաղորդումների գաղտնիությունը և ազդարարների արդյունավետ պաշտպանությունը:

ՏՀԶԿ նախնական գնահատմամբ Հայաստանում բացակայում է ազդարարների պաշտպանության համար պատասխանատու հատուկ մարմին կամ ստորաբաժանում, որն ունենա միայն այդ գործառույթին վերաբերող լիազորություններ: Հետագա փուլում օրենքում կատարված փոփոխություններով որոշ ազդարարման հետ կապված գործառույթներ հանձնվել են Մարդու իրավունքների պաշտպանին, և նշանակվել է օգնական, որը վարում է հաղորդումների գրանցումն ու ուսումնասիրությունը: Սակայն, քանի որ այդ պաշտոնյան չի իրականացնում բացառապես ազդարարների պաշտպանությանն առնչվող գործառույթներ և նման առանձնացված

ստորաբաժանում գոյություն չունի, Հայաստանը դեռևս չի համապատասխանում գնահատման ցուցանիշի պահանջներին:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ողջունել են 2022թ. ազդարարման համակարգի փոփոխությունները, որոնք վերացրին նախկին սահմանափակումները և ամրապնդեցին ազդարարների պաշտպանությունը՝ ներառյալ հանրության ազդարարման իրավունքը, պատասխանատվությունից ազատումը և ՄԻՊ-ի կողմից տրամադրվող խորհրդատվությունը:

Միևնույն ժամանակ, նրանք մատնանշել են մի շարք բացեր՝

- ազդարարի քրեական վարույթի մասնակից չհանդիսանալու դեպքերում պաշտպանության միջոցների կիրառման հստակ ընթացակարգերի բացակայություն,
- մասնավոր հատվածի աշխատողների ազդարարման իրավունքի բացակայություն,
- հանրությանը ազդարարման դեպքում ներքին և արտաքին ազդարարման պարտադիր հաջորդականության խնդրահարույց լինելը,
- իրավասու մարմինների գործառույթների խաչաձևում և անորոշություն,
- էլեկտրոնային հարթակի սահմանափակ տվյալներ և թափանցիկության պակաս:

Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման 5-րդ փուլի զեկույց[2]

2024թ. մարտին հաստատվել է Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման 5-րդ փուլի զեկույցը՝ «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կենտրոնական մարմիններում (բարձրագույն գործադիր մարմիններում և իրավապահ մարմիններում») խորագրով:

Ազդարարման համակարգի կատարելագործման վերաբերյալ ԳՐԵԿՈ-ի կողմից տրվել են հետևյալ հանձնարարականները՝

Հանձնարարական 20 - Ոստիկանությունում ներքին ազդարարման ուղիների հստակեցում

Հանձնարարական 21 - Ազդարարման վերաբերյալ ՄԻՊ լիազորությունների գործնականում իրականացում:

Ընդհանուր առմամբ ԳՐԵԿՈ-ն առաջարկում է՝

[2] https://rm.coe.int/fifth-evaluation-round-preventing-corruption-and-promoting-integrity-i/1680af5d35

- բացառել ազդարարման ուղիղ ներկայացումը ղեկավարին,
- զարգացնել ներքին ազդարարման ընթացակարգերը՝ ապահովելով գաղտնիությունը,
- բարձրացնել իրազեկվածությունը,
- Մարդու իրավունքների պաշտպանի դերը ազդարարման պաշտպանության ոլորտում դարձնել լիարժեք գործնական և արդյունավետ:

Միջազգային փորձ

Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 2019/1937 Միության կարգավորումների խախտումները հաղորդող անձանց պաշտպանության մասին ԵՄ դիրեկտիվը[3] ԵՄ երկրներին պարտադրում է ընդունել ազգային օրենսդրություն, որը ապահովում է անձանց պաշտպանություն՝ ովքեր հաղորդում են իրավախախտումների մասին, ստեղծելով անվտանգ և վստահելի ներքին ու արտաքին հաղորդման մեխանիզմներ և կանխարգելելով նրանց նկատմամբ ցանկացած խտրական գործողություն:

Դիրեկտիվը պարտադրում է, որ ազդարարմանը տրվի պատշաճ քննություն, ապահովվի ազդարարի անձնական տվյալների պաշտպանությունը և անհրաժեշտության դեպքում նրան տրամադրվի աջակցություն ու իրավական պաշտպանություն: Ընդհանուր առմամբ՝ այս փաստաթուղթը ստեղծում է համաեվրոպական ամուր համակարգ, որը խրախուսում է խախտումների մասին անվտանգ ու արդյունավետ հաղորդումը և պաշտպանում է այդ գործընթացում ներգրավված անձանց:

Դիրեկտիվի 8-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պարտավոր են ապահովել, որ մասնավոր և հանրային հատվածի իրավաբանական անձինք ներդնեն ներքին ազդարարման և հետագա գործողությունների իրականացման համապատասխան ուղիներ և ընթացակարգեր: Այս պահանջը տարածվում է նաև հանրային հատվածի բոլոր իրավաբանական անձանց վրա, ներառյալ պետության կողմից ստեղծված կամ վերահսկվող կազմակերպությունների:

Մասնավոր հատվածում տվյալ պարտավորությունը, որպես կանոն, վերաբերում է այն կազմակերպություններին, որոնք ունեն 50 և ավելի աշխատող[4]: Մասնավոր հատվածի այն իրավաբանական անձինք, որոնք ունեն 50-ից 249 աշխատող, կարող են համատեղ օգտագործել ռեսուրսները՝ հաղորդումների ընդունման և իրականացվելիք ցանկացած քննության առնչությամբ:

---

[3] https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX%3A32019L1937
[4] https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX%3A32019L1937

Միևնույն ժամանակ, բացառություններ են նախատեսվում այն կազմակերպությունների համար, որոնց գործունեությունը գնահատվում է բարձր ռիսկայնության տեսանկյունից (օրինակ՝ հանրային առողջության կամ շրջակա միջավայրի ոլորտներում), և այդպիսի դեպքերում ներքին ազդարարման մեխանիզմների ներդրումը կարող է պարտադիր լինել նույնիսկ ավելի փոքր թվով աշխատողներ ունեցող կազմակերպությունների համար: ԵՄ բոլոր անդամ պետություններում Դիրեկտիվի համաձայն 50 և ավելի աշխատակից ունեցող մասնավոր կազմակերպությունների համար պարտադիր է ներքին ազդարարման համակարգի ներդրումը[5]:

2024 թվականի հուլիսի 3-ին Եվրոպական հանձնաժողովը ընդունել է հաշվետվություն, որտեղ գնահատվում է Ազդարարների պաշտպանության դիրեկտիվի (Whistleblower Protection Directive) ազգային օրենսդրության մեջ իմպլեմենտացման (transposition) մակարդակը[6]:

Նիդերլանդներում[7] և Իռլանդիայում[8] ընդունված օրենքները չեն պահանջում ազդարարվող տեղեկատվության նախնական ստուգում, բավարար է արդարացված համոզմունքը:

Ֆրանսիայում[9] և Բելգիայում[10] ազդարարման դրդապատճառները որևէ նշանակություն չունեն, ազդարարը պաշտպանված է, անկախ նրանից՝ ինչ անձնական շահ ունի, եթե հաղորդումն ինքնին կեղծ չէ:

Շվեդիայում[11] գործատուն պարտավոր է ներկայացնել փաստաթղթային ապացույցներ՝ ցույց տալու համար, որ աշխատանքային որոշումները օբյեկտիվ են և համաչափ:

ԵՄ իրավակարգավորումից բացի, Գերմանիայում[12] (Hinweisgeberschutzgesetz, 2023) և Դանիայում[13] գործատուի վրա դրվում է ապացուցման բեռը, որ ձեռնարկված քայլերը որևէ կերպ կապ չունեն ազդարարման հետ:

---

[5] https://www.mofo.com/gdpr-european-privacy/whistleblowing/whistleblower-qa
[6] https://commission.europa.eu/document/download/7cc63350-88c9-4c0b-a46e-04fc11e673e7_en?filename=COM_2024_269_1_EN_ACT_part1_v6.pdf
[7] https://www.wetbeschermingklokkenluiders.nl/home/ik-ben-werkgever/wat-zijn-mijn-wettelijke-verplichtingen/text-dutch-whistleblower-protection-act
[8] https://www.irishstatutebook.ie/eli/2022/act/27/enacted/en/html
[9] https://whistleblowingmonitor.eu/france-adopts-new-whistleblowing-law/?utm
[10] https://www.ejustice.just.fgov.be/eli/loi/2022/11/28/2022042980/moniteur
[11] https://www.integrityline.com/expertise/blog/genomforande-av-visselblasardirektivet/?utm_
[12] https://kpmg.com/de/en/home/insights/2023/05/the-whistleblower-protection-law-enters-into-force.html?utm
[13] https://www.twobirds.com/en/insights/2022/global/an-overview-of-the-implementation-of-the-whistleblowing-directive-in-the-nordics-ii?ut

Մեծ Բրիտանիայի Public Interest Disclosure Act (PIDA)[14] ապահովում է, որ ազդարարը պաշտպանված է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական պատասխանատվությունից՝ եթե գործել է հանրային շահի պաշտպանության շրջանակում:

Ֆրանսիայում գործում է հատուկ մեխանիզմ՝ ֆիզիկական պաշտպանության, գաղտնիության երաշխիքների և նույնիսկ աշխատանքի վայրի փոփոխության հնարավորությամբ:

Իտալիայում[15] նույնպես ներդրված են հատուկ ընթացակարգեր, որոնք թույլ են տալիս ոստիկանության անմիջական աջակցություն ազդարարներին՝ բարձր ռիսկի դեպքում:

Լիտվայում և Սլովակիայում[16] օրենքները հստակ ամրագրում են, որ ազդարարները կարող են պահանջել ոչ միայն գույքային, այլ նաև բարոյական վնասի փոխհատուցում:

Պորտուգալիայում գործում է արագացված դատական ընթացակարգ, որով ազդարարները կարող են պահանջել աշխատանքի վերականգնում և վնասների հատուցում:

Ֆինլանդիայում[17] և Նիդերլանդներում օրենքները հստակ ամրագրում են, որ պետական մարմիններում և պետական ձեռնարկություններում պետք է ստեղծվեն անկախ և վստահելի ներքին հաղորդման ուղիներ:

Լեհաստանում և Իսպանիայում[18] թույլատրվում է անմիջապես դիմել հանրությանը, եթե կա ակնհայտ վտանգ կամ վրեժխնդրության բարձր ռիսկ:

Իռլանդիայում ստեղծվել է Protected Disclosures Commissioner-ը՝ անկախ մարմին, որը պատասխանատու է ազդարարների պաշտպանության համակարգի իրականացման համար:

Ֆրանսիայում գործում է Défenseur des droits անկախ մարմինը, որը հստակ լիազորություններ ունի ազդարարների պաշտպանության և բողոքների քննության հարցում:

Լիտվայում[19] Կոռուպցիայի կանխարգելման ծառայությունը ոչ միայն ընդունում է հաղորդումներ, այլ նաև մշակում վիճակագրություն և հրապարակում տարեկան զեկույցներ:

Ըստ ՏՀԶԿ-ի՝ անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին ազդարարելուց զատ կան ներքին ազդարարման ուղիների մի շարք այլ տեսակներ: Ուկրաինայում[20] դրանք են՝ միասնական

---

[14] https://www.gov.uk/government/publications/whistleblowing-and-the-public-interest-disclosure-act-1998-c23/whistleblowing-and-the-public-interest-disclosure-act-1998-c23-accessible-version?utm_

[15] https://www.avvocaturastato.it/en/segnalazione-di-illecito-whistleblowing?utm_

[16] https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2023/747103/EPRS_BRI%282023%29747103_EN.pdf?utm

[17] https://iuslaboris.com/insights/whistleblowing-in-finland-legislation-finally-published/?utm_

[18] https://www.boe.es/boe/dias/2023/02/21/pdfs/BOE-A-2023-4513.pdf?utm_

[19] https://www.prokuraturos.lt/data/public/uploads/2020/02/1.9-225-praneseju-apsaugos-istatymas-eng.pdf

[20] https://www.oecd.org/en/publications/ukraine-fifth-round-of-anti-corruption-monitoring-follow-up-report_097f0a38-en.html

տեղեկատվական հարթակը (UWNP), պաշտպանված էլ.փոստերը, հակակոռուպցիոն մասնագիտացված հատուկ ստորաբաժանումները, հեռախոսային թեժ գծերը, իսկ որոշ կազմակերպություններում՝ չաթ-բոտերը կամ այլ թվային գործիքները: Մոլդովայում[21] ներքին ազդարարման տեսակներն են՝ թեժ գծեր, էլ. փոստի հասցեներ, հնարավորության դեպքում էլեկտրոնային համակարգեր և բանավոր ազդարարումներ՝ գործատուի կողմից կառավարվող հեռախոսային գծի միջոցով:

Մասնագիտացված հատուկ ստորաբաժանումները, որոնք գործում են երկու երկրներում էլ, օգնում են առանձնացնել ազդարարումների վերաբերյալ տեղեկատվությունը ղեկավարությունից՝ շահերի բախումից խուսափելու նպատակով, մինչդեռ թվային գործիքները մեծացնում են մատչելիությունը և ապահովում գաղտնիության պաշտպանությունը:

4. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Վերոգրյալի հաշվառմամբ Նախագծերով առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1. Ներքին ազդարարման իրավասու մարմինների շրջանակի ընդլայնում ներքին ազդարարման իրավասու մարմինների ցանկը ընդլայնվում է՝ ներառելով նաև 50 և ավելի աշխատակից ունեցող մասնավոր ոլորտի կազմակերպությունները:

Հարկ է նշել, որ ներկայումս ընդունվել է մասնավոր ոլորտի կազմակերպություններում ներքին ազդարարման ինստիտուտի փուլային ներդրման ճանապարհը՝ հիմք ընդունելով նաև Հայաստանի Հանրապետության առկա միջազգային պարտավորությունները: Ինստիտուտի փուլային ներդրման ուղին թույլ կտա գնահատել ներդրվող իրավակարգավորումների ազդեցությունը մասնավոր ոլորտի կազմակերպությունների գործունեության վրա, ինչպես նաև նվազեցնել մասնավոր ոլորտի կազմակերպություններում նոր ինստիտուտի ներդրման արդյունքում առաջ եկող հնարավոր ռիսկերը:

Նախատեսվել է, որ ներքին ազդարարման վերաբերյալ կարգավորումները մինչև 2028 թվականի հունվարի 1-ը տարածվելու են միայն 250 և ավելի աշխատակից ունեցող մասնավոր ոլորտի կազմակերպությունների վրա, իսկ 2028 թվականի հունվարի 1-ից հետո ներքին

[21] https://www.oecd.org/en/publications/moldova-fifth-round-of-anti-corruption-monitoring-follow-up-report_007fdb43-en.html

ազդարարման վերաբերյալ կարգավորումները կտարածվեն նաև 50 և ավելի աշխատակից ունեցող մասնավոր ոլորտի կազմակերպությունների վրա:

250 և ավելի աշխատակից ունեցող կազմակերպությունների շեմի սահմանումը բխում է «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով ամրագրված խոշոր կազմակերպության չափանիշներից, որտեղ 250 աշխատակիցը հանդիսանում է գնահատման հիմնական ցուցանիշներից մեկը: Նշված մոտեցումը նպատակ ունի ներքին ազդարարման պարտավորությունը սկզբնական շրջանում տարածել այն կազմակերպությունների վրա, որոնք ունեն բավարար կազմակերպական և ռեսուրսային կարողություններ:

Հարկ է նշել, որ մասնավոր ոլորտի կազմակերպություններում աշխատողների միջին տարեկան թվաքանակը հաշվարկվում է նախորդ օրացուցային տարվա (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը) յուրաքանչյուր ամբողջական ամսվա վերջին օրվա դրությամբ աշխատողների թվաքանակների հանրագումարը հարաբերելով ամբողջական ամիսների թվի վրա:

2. «Ազդարարում» հասկացության մեջ ընդգրկվում են նաև փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր իրավախախտումների վերաբերյալ հաղորդումները:

3. Օրենքով նախատեսվում է արտաքին ազդարարման հաղորդումներ ընդունելու մեկ մարմին:

4. Ներքին ազդարարման իրավասու մարմինները պարտավորվում են ստեղծել ներքին ազդարարման ուղիներ և ընթացակարգեր՝ ապահովելով ազդարարի գաղտնիության պահպանումը և հաղորդումների պատշաճ, օբյեկտիվ քննությունը:

5. Արտաքին ազդարարումը իրականացվելու է բացառապես էլեկտրոնային հարթակի միջոցով:

6. Ներքին ազդարարումն այլևս չի իրականացվելու անմիջական վերադասին:

7. Հստակեցվում է ազդարարի պաշտպանության հարցերով զբաղվող մարմինը, ինչպես նաև պաշտպանության միջոցները տրամադրող մարմինը: Թեթևացվում է ազդարարի բարեխղճորեն գործելու պարտականությունը. նրա վրայից հանվում է տրամադրվող տեղեկության նախնական ստուգման պարտականությունը:

5. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագծերը մշակվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

6. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է նպաստել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետության ապահովմանը, զարգացնել ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրություն վարելու համակարգը՝ ներդնելով առավել գործուն մեխանիզմներ: